- **Տվյ. փոխանցում** — Ընտրված տվյալները համաժամացրեք կամ պատճեններ ձեռք հեռախոսի և մեկ այլ սարքի, անհատական համակարգչի կամ ցանցային սերվերի (ցանցային ծառայության) միջև:

Միացնելիություն

Ձեր հեռախոյն ունի մի քանի հնարավորություն, որոնք թույլ են տալիս միանալ այլ սարքերի՝ այլալեկեր փոխանցելու և ստանալու համար:

Bluetooth անլար տեխնոլոգիա

Bluetooth տեխնոլոգիան թույլ է տալիս ձեր հեռախոյնը ռադիոալիքների միջոցով միացնել համատեղելի Bluetooth սարքի՝ 10 մետր (32 ոտնաչափ) շառավղով:


Սույն սարքը համապատասխանում է հետևյալ պրոֆիլներին՝ ապահովող Bluetooth Specification 2.0 + EDR մասնագրերին. 2.0 + EDR ընդհանուր մուտք, ցանցային մուտք, կառավարում, ձեռնագրատ, ականջակալ, օբյեկտների հրում, ֆայլերի փոխանցում, հեռադիր մուտք դեպի ցանց, SIM մուտք, և հաջորդական պարտ .

Bluetooth տեխնոլոգիայով աշխատող այլ սարքերի հետ փոխհամատեղելիությունը ապահովելու համար օգտագործեք միայն Nokia-ի կողմից այս մոդելի համար թույլատրված լրացուցիչ սարքերը: Սույն սարքի հետ այլ սարքերի համատեղելիությունը պարզելու համար դիմեք այդ սարքերն արտադրողներին:

Bluetooth տեխնոլոգիաների կիրարկմամբ գործող ֆունկցիանալ հնարավորությունները մարտկոցից ավելի շատ սնուցում են պահանջում, ինչը նվազեցնում է մարտկոցի լիցքը:

Bluetooth միացման գործարկում

Հնարեք **Հնոցնկ > Պարամետրեր > Միացնելիություն > Bluetooth** և կատարեք հետևյալ ֆայլերը.

1. Ընտրեք **Իմ հեռ. անունը** և ձեր հեռախոսի համար անուն մուտքագրեք:
2. Bluetooth միացնելի ժամանակ ակտիվացնելու համար ընտրեք **Bluetooth > Միացնել:**  նշանը ցույց է տալիս, որ Bluetooth-ն ակտիվ է:
3. Ձեր հեռախոսը ձայնային լրասարքի հետ միացնելու համար ընտրեք **Միաց. օժ. լրասարքեր** և այն սարքը, որին ուզում եք միանալ:
4. Ձեր հեռախոսը տիրույթում առկա որևէ Bluetooth սարքի հետ գուգտակելու համար ընտրեք **Զուգակված սարքեր > Ավլ. նոր սարք:**

Ուրբեք դեպի գտնված սարքը և ընտրեք **Ավլցնել:**

Ձեր հեռախոսի մեջ մուտքագրեք անցակոդ (մինչև 16 նիշ) և բոլորսարքեր միացում մյուս Bluetooth սարքի վրա:

Եթե դուք մտահոգված եք անվտանգությամբ, անջատեք Bluetooth գործառույթը կամ **Իմ հեռ. տսնլիություն** դրեք **Թափցված:** Bluetooth հաղորդակցություն ունեցեք միայն նրանց հետ, ում վստահում եք:

ԱՀ-ով միացում ինտերնետին

Օգտվեք Bluetooth-ից՝ ձեր համատեղելի անհատական համակարգիչն առանց PC Suite ծրագրակազմի ինտերնետին միացնելու համար: Ձեր հեռախոսը պետք է ունենա ինտերնետի մուտք ապահովող ծառայության մատակարար, իսկ ձեր ԱՀ-ը պետք է ապահովի Bluetooth-ի անհատական ցանց (PAN): Հեռախոսի ցանցային մուտքի կետի (NAP) ծառայությունը միանալուց և ձեր ԱՀ-ի հետ գուգտակելուց հետո ձեր

Պարամետրեր

հեռախոսն ինֆրաբերաբար փաթեթային տվյալների կապ կհաստատի ինտերնետի հետ:

Փաթեթային տվյալներ

Հնդիանուր նեանակալության փաթեթային ազդիակալը (GPRS) ցանցային ծառայություն է, որը շարժական հեռախոսների թույլ է տալիս տվյալներ ուղարկել և ստանալ ինտերնետային կանխագրի (IP) վրա հիմնված ցանցով:

Սահմանելու համար, թե ինչպես օգտվել ծառայությունից, ընտրել **Հնացնի > Պարամետրեր > Միացնելիություն > Փաթ. տվյալներ > Փաթ. տվյ. միացում** և հետևյալ ընտրանքներից.

- **Պինջի դեպի** — փաթեթային տվյալների փոխանցման միացում հաստատելու համար, երբ ծրագիրը դա պահանջում է: Միացումը փակվում է, երբ ծրագրի գործողությունն ավարտվում է:
- **Միշտ օնլայն** — փաթեթային տվյալների ցանցին ինֆրաբար միանալու համար, երբ դուք միացնում եք հեռախոսը:

Դուք կարող եք ձեր հեռախոսն օգտագործել որպես մոդեմ՝ այն միացնելով Bluetooth տեխնոլոգիա օգտագործող համատեղելի ԱՀ-ի: Մանրամասների համար տե՛ս Nokia PC Suite-ի փաստաթղթերի փաթեթը:

Կանչեր և հեռախոս

Հնարել Հնացնի > Պարամետրեր > Կանչ:

Մտից կանչերը շեղելու համար ընտրել **Կանչի շեղում** (ցանցային ծառայություն): Մանրամասների համար դիմե՛ք ձեր ծառայության մատակարարին:

Անհաջող փորձից հետո կանչի միացման տասը փորձ կատարելու համար ընտրել **Ավտ. վերահիվճում > Միացնել**:

Կանչի ընթացքում ցանցից մտից կանչի ծանուցում ստանալու համար ընտրել **Կանչի հետաձգում > Ակտիվացնել** (ցանցային ծառայություն):

Նախադրելու համար, թե արդյո՞ք ձեր համարը ցուցադրվի այն անձին, ում զանգում եք, ընտրե՛ք **Ուղ. իմ բժնրդ. ID** (ցանցային ծառայություն):

Ջեր հեռախոսի ցուցադրման լեզուն նախադրելու համար ընտրե՛ք **Ընտցնել > Պարամետրեր > Հեռախոս > Լեզվի պարամետրեր > Հեռախոսի լեզուն**:

Լրացուցիչ սարքեր

Այս ընտրացանկը և իր զանազան ընտրանքները ցուցադրվում են, միայն եթե հեռախոսը միացված է համատեղելի օբյեկտիվ կրասարքի:

Ընտրել **Ընտցնել > Պարամետրեր > Լրասարքեր**: Ընտրել լրացուցիչ սարք և ավյալ սարքին համապատասխան ընտրանք:

Կազմաձևում

Դուք կարող եք ձեր հեռախոսը կազմաձևել որոշակի ծառայությունների համար պահանջվող պարամետրերով: Ջեր ծառայության մատակարարը նույնպես կարող է ձեզ ուղարկել այդ պարամետրերը:

Պարամետրեր

Հնտրել **Հնտցնկ** > **Պարամետրեր** > **Կազմած** և հետևյալ ընտրանքներինց.

- **Կնխդրվծ կզմծ պմ** — հեռախոսում պահպանված ծառայության մատակարարներին դիտելու և ծառայության մատակարար կանխադրելու համար:
- **Ակտ. կնխ. պմ բլ. ծգ** — ապահովված ծրագրերի համար կանխադրված կազմածևման պարամետրերն ակտիվացնելու համար:
- **Նախընտ. մտֆ. կետ** — պահպանված մուտֆի կետերը դիտելու համար:
- **Միանալ աջակցման** — ձեր ծառայության մատակարարին կազմածևման պարամետրեր ներլցնելու համար:
- **Սարքի կոլորչի պմտ** — հեռախոսով ծրագրակազմերի թարմացումների ստացումը թույլ տալու կամ կանխելու համար: Այս ընտրանքը կարող է առկա չլինել՝ ձեր հեռախոսինց կախված:
- **Անհատ. կզմծ. պմտ** — գանազան ծառայությունների համար ձեռնով նոր անձնական հաշիվներ ավելացնելու և դրանք ակտիվացնելու կամ վերացնելու համար: Նոր անձնական հաշիվ ավելացնելու համար ընտրել **Ավ. նոր** կամ **Հնտրֆ** > **Ավելացնել նորը**: Հնտրել ծառայության տեսակը և մուտֆագրել պահանջվող պարամետրերը: Անձնական հաշիվն ակտիվացնելու համար ուրել դեպի այն և ընտրել **Հնտրֆ** > **Ակտիվացնել**:

Գործարանային պարամետրերը վերականգնելը

Հեռախոսը գործարանային վիճակի բերելու համար ընտրել **Հնտցնկ** > **Պարամետրեր** > **Վրկգ. գրծրն պմ** և հետևյալ ընտրանքներինց մեկը.

- **Վրկնզնլ միայն պմտ** — բուր նախապատվությունների պարամետրերն առանց անձնական տվյալների վերացման հետադարձելու համար:
- **Վերականգնլ բուրը** — բուր նախապատվությունների պարամետրերը հետադարձելու և բուր անձնական տվյալները, ինչպիսիք են կոնտակտները, հաղորդագրությունները, մեդիա ֆայլերը և ակտիվացման բանալիները, վերացնելու համար:

10. Օպերատորի ընտրացանկ

Մուտք գործեք ձեր ցանցային օպերատորի կողմից տրամադրված ծառայությունների պորտալ: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ձեր ցանցային օպերատորին: Օպերատորը կարող է այս ընտրացանկը թարմացնել սպասարկման հաղորդագրությամբ:

11. Պատկերասրահ

Իրավունքների թվային կառավարման (DRM) միջոցով պաշտպանված բովանդակության հետ միասին տրվում է համապատասխան ակտիվացման բանալի, որը սահմանում է բովանդակությանից օգտվելու Ձեր իրավունքները:

Եթե ձեր սարքի վրա OMA DRM-ով պաշտպանված բովանդակություն կա, ակտիվացման բանալիների և բովանդակության պահեստային օրինակ ստեղծելու համար օգտագործեք Nokia PC Suite ծրագրի համապատասխան ֆունկցիոնալ հնարավորությունը: Հնարավոր է, որ տվյալների փոխանցման այլ եղանակներ օգտագործելիս ակտիվացման բանալիները չփոխանցվեն: Փոխանցման այլ ձևերը կարող է

Միջոցներ

չփոխանցեն ակտիվացման բանալիները, որոնց վերականգնումը՝ բավանդակության հետ միասին, անհրաժեշտ է, որպեսզի կարողանաք ցարունակել OMA-DRM-ով պաշտպանված բովանդակության օգտագործումը՝ սարքի հիշողության ֆորմատավորումից հետո:

Ակտիվացման բանալիները վերականգնելու անհրաժեշտություն կարող է առաջանալ նաև սարքի վրա գտնվող ֆայլերի վնասվելու դեպքում:

Ձեր հեռախոսն ապահովում է իրավունքների րվային կառավարման (ԻԹԿ) համակարգ՝ ձեռք բերված բովանդակությունը պաշտպանելու համար: Միշտ ստուգեք ցանկացած բովանդակության և ակտիվացման բանալու առաժման պայմանները նախքան դրանք ձեռք բերելը, քանի որ դրանք կարող են վնասման ենթակա լինել:

Պահպանեքը դիտելու համար ընտրել **Ընտցնի > Պատկերասրահ:**

12. Միջոցներ

Խցիկ և վիդեո

Ձեր սարքը ապահովում է 1280x1024 պիքսել խտությամբ նկարահանում:

Լուսանկարահանում

Լուսանկարահանման գործառույթից օգտվելու համար սպասման ռեժիմում սեղմել խցիկի ստեղծը կամ, եթե տեսագրման գործառույթը միացված է, ուղարկել ձայն կամ աջ: Պատկեր սևեռելու համար սեղմել խցիկի ստեղծը:

Խցիկի ռեժիմում չափերը մեծացնելու կամ փոքրացնելու համար ուղրել վեր կամ վար:

Խցիկը գիշերային ռեժիմում դնելու, ինֆրառույզը միացնելու կամ արագ հաջորդականությամբ լուսանկարելու համար ընտրել **Հնարք** և ցանկալի տարբերակը: Նախադիտման ռեժիմը և ժամանակը նախադրելու համար ընտրել **Հնարք > Պարամետրեր > Պտկր նխդիտմ.** ժնկ:

Տեսահոլովակի տեսագրում

Տեսագրման գործառույթից օգտվելու համար սեղմել և պահել խցիկի ստեղծը: Տեսագրումը սկսելու համար սեղմել խցիկի ստեղծը:

Տեսահոլովակի հնարավոր երկարությունը նախադրելու համար ընտրել **Հնացնկ > Միջոցներ > Խցիկ > Հնարք > Պարամետրեր > Տահոլովակի երկթն:**

FM ռադիո

FM ռադիոյի աշխատանքը կախված է ալեհավաքից, որը հեռախոսի նույն ալեհավաքը չէ: FM ռադիոյի նորմալ աշխատանքի համար հարկավոր է համատեղելի գլխային հեռախոս կամ օժանդակ սարք օգտագործել:



Ուշադրություն. Երաժշտությունը լսեք չափավոր բարձրությամբ: Տևականորեն բարձր ձայն լսելը կարող է վնասել ձեր լսողությունը: Բարձրախոսից օգտվելիս հեռախոսը տկանջին մոտ մի պահեք, քանի որ ձայնը կարող է չափազանց բարձր լինել:

Միջոցներ

Ընտրել **Ընտցնկ > Միջոցներ > Ռադիո** կամ, սպասման ռեժիմում, սեղմել և պահել *:

Եթե արդեն պահպանել եմ ռադիոկայաններ, ուրբեմ վեր կամ վար՝ կայանների միջև տեղափոխվելու համար, կամ սեղմեմ հիշողության մեջ ցանկալի կայանի տեղադրության համապատասխան թվային ստեղները:

Հարևան կայանը որոնելու համար սեղմել ուրման ստեղը և սեղմած պահել ձախ կամ աջ:

Արդեն լարված կայանը պահպանելու համար ընտրել **Ընտրք > Պահպ. կայանը**:

Ձայնը կարգավորելու համար ուրբեմ վեր կամ վար:

Ռադիոն հետին պլանում միացված թողնելու համար սեղմել վերջի ստեղը: Ռադիոն անջատելու համար սեղմել և պահել վերջի ստեղը:

Ձայնագրանցիչ

Ձայնագրիչը հնարավոր չէ օգտագործել, երբ գործածվում է տվյալների փոխանակման գանգը կամ ակտիվացրած է GPRS ծառայությունը:

Գրանցումը սկսելու համար ընտրել **Ընտցնկ > Միջոցներ > Ձայնագրանցիչ** և թվացյալ գրանցման կոճակը ցուցասարքի վրա:

Ամենավերջին գրանցումը լսելու համար ընտրել **Ընտրք > Նվգ. վրջ. գրնցծ**: Վերջին գրանցումը մուլտիմեդիա հաղորդագրության միջոցով ուղարկելու համար ընտրել **Ընտրք > Ուղ. վրջն գրնցծ**:

Նվագարկիչ

Ձեր հեռախոսը նվագարկիչ ունի՝ երգեր կամ այլ MP3 կամ AAC ձայնաֆայլեր լսելու համար:



Ուշադրություն. Երաժշտությունը լսե՛ք չափավոր բարձրությամբ: Տևականորեն բարձր ձայն լսելը կարող է վնասել ձեր լսողությունը: Բարձրախոսից օգտվելիս հեռախոսը ակացիին մոտ մի պահե՛ք, քանի որ ձայնը կարող է չափազանց բարձր լինել:

Ընտրել **Ընտցնկ > Միջոցներ > Նվագարկիչ:**

Նվագարկումը սկսելու կամ դադար տալու համար ընտրել միջին ընտրության ստեղծը:

Դեպի ընթացիկ ժամկետի սկիզբը ցատկանցելու համար ուղարկե՛ձախ:

Նախորդ ժամկետի ցատկանցելու համար ուղարկե՛ձախ ստեղծը երկու անգամ սեղմել դեպի ձախ:

Հաջորդ ժամկետի ցատկանցելու համար ուղարկե՛ձախ դեպի աջ:

Հետ փառաթելու համար ուղարկե՛ձախ ստեղծը սեղմել և պահել դեպի ձախ:

Արագ առաջ փառաթելու համար ուղարկե՛ձախ ստեղծը սեղմել և պահել դեպի աջ:

Ձայնը կարգավորելու համար ուղարկե՛ձախ վե՛ր կամ վա՛ր:

Նվագարկիչի ձայնը խլացնելու կամ միացնելու համար սեղմել **#**:

Ծրագրեր

Նվագարկիչը հետին պլանում աշխատեցնելու համար սեղմել ավարտի ստեղծը: Նվագարկմանը վերջ տալու համար սեղմել և պահել ավարտի ստեղծը:

13. Ծրագրեր

Ձեր հեռախոսի ծրագրակազմը կարող է ներառել հատկապես այս Nokia հեռախոսի համար նախատեսված որոշ խաղեր և Java ծրագրեր:

Հնարել **Հնտցնկ > Ծրագրեր**:

Խաղ կամ ծրագրի գործարկելու համար ընտրել **Խաղեր** կամ **Հավաքածու**: Ուրեղ մինչև խաղը կամ ծրագրիչը և ընտրել **Բացել**:

Խաղի և ծրագրի տեղադրման համար մտաչելի հիշողության ծավալը դիտելու նպատակով ընտրել **Հնտրք > Հիշ. կարգավիճակ**:

Խաղ կամ ծրագրի ներլցնելու համար ընտրել **Հնտրք >**

Ներլցումներ > Խաղի ներլցնիչ կամ **Ծր. ներլցումներ**: Ձեր հեռախոսն ապահովում է J2ME™ Java ծրագրեր: Նախֆան ծրագրի ներլցնելը՝ համոզվեք, որ այն համատեղելի է ձեր հեռախոսի հետ:



Կարևոր է. Տեղադրեք և օգտագործեք միայն վստահելի աղբյուրներից ստացված ծրագրեր և ծրագրակազմեր՝ այնպիսիք, ինչպիսիք են Symbian Signed հեռախոսմամբ կամ Java Verified™ փորձաքննությունն անցած ծրագրերը:

Ներլցված ծրագրերը կարելի է պահպանել **Պատկերասրահում**՝ **Ծրագրերի** փոխարեն:

14. Կազմակերպիչ

Զարթուցիչ

Ընտրել **Ընտցնկ > Կազմակերպիչ > Զարթուցիչ**:

Զարթուցիչը միացնելու կամ անջատելու համար ընտրել **Տազնապ՛**: Տազնապի ժամ դնելու համար ընտրել **Տազնապի ժամը՛**: Շաբաթվա ընտրված օրերին հեռախոսով գզուշացում նախադրելու համար ընտրել **Կրկնում՛**: Տազնապի հնչեբանգն ընտրելու կամ անհատականացնելու համար ընտրել **Տզնպի ազդնեն՛**: Նիրհի գզուշացման պարապուրդը նախադրելու համար ընտրել **Նիրհն. պրպուրդ՛**:

Տազնապը վերջացնելու համար ընտրել **Վերջ**: Եթե թույլ եք տալիս, որ հեռախոսը շարունակի մեկ րուպե տազնապ հնչեցնել, կամ ընտրում եք **Նիրհել**, տազնապը վերջանում է՝ նիրհման պարապուրդի համար, և ապա վերականգնվում է:

Օրացույց և անելիքների ցանկ

Ընտրել **Ընտցնկ > Կազմակերպիչ > Օրացույց**: Ընթացիկ օրը արջանակված է: Եթե օրվա համար նշումներ կան արված, ապա օրը ցույց է տրվում թավ նիշերով:

Օրացուցային նշում անելու համար ուղրել ամսաթիվը և ընտրել **Ընտրք > Նշում անել**:

Համացանց

Օրվա նշումները դիտելու համար ընտրել **Դիտել**; Բոլոր օրացուցային նշումները վերացնելու համար ընտրել **Հնարք > Վերաց. նշումներ > Բոլոր նշումները**:

Անելիքների ցանկը դիտելու համար ընտրել **Հնացնի > Կազմակերպիչ > Անելիքների ցնի**: Անելիքների ցանկը ցուցադրվում և տեսակավորվում է ըստ առաջնայնության: Նշում ավելացնելու, վերացնելու կամ ուղարկելու, գրառումը որպես արված նշելու կամ անելիքների ցանկին ըստ վերջնաժամկետի տեսակավորելու համար ընտրել **Հնարք**:

15. Համացանց

Ձեր հեռախոսի գնորակիչով կարող եք մուտք գործել գաղափար արժանի ինտերնետային ծառայություններ: Համացանցային էջերի արտաֆին տեսքը կարող է տարբեր լինել՝ էկրանի չափերից կախված: Հնարավոր է, որ ցանցէջերում չկարողանաք տեսնել բոլոր մանրամասնությունները:



Կարևոր է. Օգտվեք միայն այն ծառայություններից, որոնց վստահում եք և որոնք ապահովում են համապատասխան անվտանգություն և պաշտպանություն վնասակար ծրագրերից:

Այս ծառայությունների, գնորուժման և հրահանգների առկայությունը ստուգեք ձեր ծառայության մատակարարի հետ:

Դուք կարող եք ստանալ զննարկման համար պահանջվող կազմաձևման պարամետրեր՝ որպես կազմաձևման հաղորդագրություն ծառայության մատակարարից:

Համացանցային ծառայությանը միանալը

Ծառայության հետ կապ հաստատելու համար ընտրել **Հնոցնկ > Համացանց > Հիմնաէջ**, կամ սպասման ռեժիմում սեղմել և պահել **0**,

Ծառայության հետ կապ հաստատելուց հետո կարող եք սկսել էջերի զննարկումը: Հեռախոսի ստեղների գործառնությունները կարող են տարբեր լինել տարբեր ծառայությունների դեպքում: Հետևեք հեռախոսի ցուցասարքի վրայի տեքստային հրահանգներին: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ձեր ծառայության մատակարարին:

16. SIM ծառայություններ

Ձեր SIM ֆարսը կարող է տրամադրել հավելյալ ծառայություններ: Դուք կարող եք մուտք գործել այս ընտրացանկ այն դեպքում միայն, եթե դա ապահովվում է ձեր SIM ֆարսով: Ընտրացանկի անունը և բովանդակությունը կախված են առկա ծառայություններից:

Լրացուցիչ սարքեր



Ուսադրություն. Գործածե՛ք բացառապես տվյալ մոդելի հետ օգտագործելու համար **Nokia**-ի կողմից հաստատագրված մարտկոցներ, լիցֆավորիչներ և լրացուցիչ սարքեր: Ցանկացած այլ տեսակների օգտագործումը կարող է անվավեր դարձնել հաստատումները կամ երաժիշիֆները և վտանգավոր լինել:

Nokia-ի կողմից հաստատագրված լրացուցիչ սարքերի ակայությունը պարզելու համար խնդրում ենք դիմել ձեր գործակալին: Լրացուցիչ սարքերի հոսանքի լարն անջատելիս բռնե՛ք և ֆաե՛ք խրոցը, այլ ոչ թե լարը:

Մարտկոց

Տեղեկություններ մարտկոցի և լիցֆավորիչի վերաբերյալ

Ձեր սարքը սնուցվում է վերալիցֆավորվող մարտկոցից: Այս սարքի հետ օգտագործման համար նախատեսված մարտկոցը **BL-4S** է: Սույն սարքը նախատեսված է հետևյալ լիցֆավորիչներով օգտագործվելու համար. **AC-3**: Մարտկոցը կարելի է հարյուրավոր անգամներ լիցֆավորել և լիցֆարափել, բայց ի վերջո այն կենթարկվի բնականոն մաշվածության: Երբ նկատե՛ք, որ խոսակցության և սարքի՝ սպասելու ռեժիմում գտնվելու ժամանակահատվածները սովորականից նկատելիորեն ավելի կարճ են դարձել, ապա փոխե՛ք մարտկոցը: Օգտագործե՛ք միայն այս սարքի համար նախատեսված և **Nokia**-ի

կողմից հաստատված մարտկոցներ ու լիցքավորիչներ դրանք լիցքավորելու համար: Հաստատում չստացած մարտկոցի կամ լիցքավորիչի շահագործումը կարող է հրդեհի, պայթյունի, արտահոսքի կամ այլ վտանգավոր իրադրության պատճառ դառնալ:

Խրոցակի տեսակից կախված՝ լիցքավորիչի մոդելի ստույգ համարը կարող է տարբեր լինել: Խրոցակի վարկածը նույնականացվում է ստորև նշվածներից որևէ մեկով. E, EB, X, AR, U, A, C կամ UB:

Մարտկոցն առաջին անգամ օգտագործելու կամ երկար ժամանակ չօգտագործելու դեպքում կարող է անհրաժեշտ լինել նախ միացնել լիցքավորիչը, ապա անջատել այն և նորից միացնել՝ մարտկոցի լիցքավորումը սկսելու համար: Եթե մարտկոցը ամբողջովին լիցքաթափված է, կարող է մի քանի րոպե պահանջվել, մինչև լիցքավորման նշանը հայտնվի էկրանին, կամ հնարավոր լինի զանգեր կատարել:

Մարտկոցը հանելուց առաջ սարքը միշտ անջատեք և լիցքավորիչից զատեք:

Երբ լիցքավորիչը չի օգտագործվում, անջատեք այն հոսանքի վարդակից և սարքից: Ամբողջությամբ լիցքավորված մարտկոցը լիցքավորիչին միացված մի թողեք, քանի որ գերլիցքավորումը կարող է կրճատել մարտկոցի շահագործման ժամկետը: Չօգտագործվելու դեպքում ամբողջությամբ լիցքավորված մարտկոցը ժամանակի ընթացքում լիցքաթափվում է:

Առնվազն մարտկոցը պահել 15°C մինչև 25°C (59°F և 77°F) ջերմաստիճանում: Մայրաստիճան բարձր կամ ցածր ջերմաստիճանները նվազեցնում են մարտկոցի հզորությունը և

Մարտկոց

կրճատում շահագործման ժամկետը: Տաֆ կամ սառը մարտկոցով սարքը կարող է ժամանակավորապես չափառտել: Մարտկոցի աշխատանքը հասկապես սահմանափակ է գրոյից ցածր ջերմաստիճաններում:

Մարտկոցի վրա կարճ միացում մի ստեղծեք: Պատահական կարճ միացում կարող է առաջանալ, եթե մետաղական որևէ իր, օրինակ՝ մետաղադրամ, ամրակ, կամ գրիչ, ուղիղ միացություն ստեղծի մարտկոցի դրական (+) և բացասական (-) հղակների միջև: (Դրանք մարտկոցի վրա մետաղական շերտերի տեսք ունեն): Սա կարող է տեղի ունենալ, օրինակ, երբ դուք պահեստային մարտկոցը գրպանում կամ դրամապանակում եք պահում: Հղակների կարճ միացումը կարող է վնասել մարտկոցը կամ իրը, որը կարճ միացում է առաջացրել:

Մարտկոցը կրակի մեջ մի գցեք, քանի որ այն կարող է պայթել:

Վնասվելու դեպքում նույնպես մարտկոցը կարող է պայթել:

Մարտկոցները դեն գցելիս գործեք տեղական իրավական ակտերի համաձայն: Եթե հնարավոր է, մարտկոցը հանձնեք՝ նյութերը կրկին օգտագործելու համար: Մարտկոցը դեն մի նետեք որպես կենցաղային աղբ:

Բջիջները կամ մարտկոցները չպետք է կազմատել, կտրել, բացել, փոքել, հկել, ձևախախտել, ծակել կամ կոտրատել: Արտահոսքի դեպքում թույլ մի տվեք, որ հեղուկը մաշկին կամ աչքերին դիպչի: Նման դեպքում մաշկը և աչքերն անմիջապես ջրով լվացեք կամ դիմեք բժշկի օգնությանը:

Մարտկոցը չի կարելի ձևավորել, վերանճակել: Չի կարելի փորձել օտար առարկաներ մտցնել մարտկոցի մեջ, այն ընկղմել ջրի կամ այլ հեղուկների մեջ կամ ենթարկել այդպիսի ազդեցության:

Մարտկոցի սխալ օգտագործումը կարող է հրդեհի, պայթյունի կամ այլ վտանգավոր իրադրության պատճառ դառնալ: Եթե սարքը կամ մարտկոցը վայր է գցել, հատկապես՝ պինդ մակերևույթի վրա, և կարծում եք, որ մարտկոցը վնասվել է, նախքան օգտագործումը շարունակելը այն տարեք սասարկման կենտրոն՝ գննման համար:

Մարտկոցն օգտագործեք միայն իր նպատակային նշանակությամբ: Վնասված լիցքավորիչ կամ մարտկոց մի օգտագործեք: Մարտկոցը փոքր երեխաներից հեռու պահեք:

Nokia մարտկոցի խսկությունը ստուգելու ուղեցույց

Ձեր ապահովության համար օգտագործեք միայն Nokia-ի գործարանային մարտկոցները: Համոզված լինելու համար, որ Դուք Nokia-ի գործարանային մարտկոց եք ձեռք բերում, այն գնեք Nokia-ի լիազորված գործակալից և ստուգեք հոլոգրամային պիտակը՝ կատարելով հետևյալ քայլերը.

Բոլոր չորս քայլերը հաջողությամբ ավարտելը լիովին չի երաշխավորում մարտկոցի գործարանային լինելու փաստը: Եթե պատճառներ ունեք կասկածելու, որ մարտկոցը Nokia-ի բնօրինակ մարտկոց չէ, խուսափեք այն օգտագործելուց և տարեք Nokia-ի մոտակա լիազոր սպասարկման կետ կամ վաճառքի գործակալի մոտ՝ համապատասխան աջակցություն ստանալու համար: Nokia-ի լիազոր սպասարկման կետը կամ վաճառքի գործակալը կստուգեն մարտկոցի խսկությունը: Եթե մարտկոցի խսկությունը հնարավոր չէ պարզել, մարտկոցը վերադարձրեք այնտեղ, որտեղից գնել եք:

Մարտկոց

Ստուգե՛ք հոլոգրամը

1. Պիտակի վրայի հոլոգրամը դիտելիս պետք է մի անկյան տակ տեսնե՛ք **Nokia** ձեռքերը միացնող նշանը, և մեկ այլ անկյան տակ նայելիս՝ **Nokia Original Enhancements** պատկերանշանը:
2. Հոլոգրամը ձախ, աջ, ներքև և վերև քե՛ֆելիս դուք պետք է նրա կողմերի վրա տեսնե՛ք համապատասխանաբար 1, 2, 3 և 4 կետ:



Ի՞նչ անել, եթե մարտկոցը գործարանային չէ

Եթե չե՛ք կարող համոզվել, որ պիտակի վրա հոլոգրամ ունեցող Ձեր **Nokia** մարտկոցը գործարանային է, խնդրում ենք այն չօգտագործել: Մարտկոցը տարե՛ք **Nokia** մոտակա լիազոր սպասարկման կենտրոն կամ վաճառքի գծով գործակալի մոտ՝ աջակցություն ստանալու համար: Արտադրողի կողմից չհաստատագրված մարտկոց օգտագործելը կարող է վտանգավոր լինել և կարող է հանգեցնել սարքի ոչ բավարար աշխատանքի ու վնաս պատճառել Ձեր սարքին և դրան միացված

լրացուցիչ սարքերին: Դա կարող է նաև անվավեր դարձնել սարքի նկատմամբ կիրառելի այս կամ այն հաստատումը կամ երաժիշիքը:

Գործարանային **Nokia** մարտկոցների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.nokia.com/battery կայքը:

Խնամք և սպասարկում

Ձեր սարքը բարձրակարգ նախագծման և հմտության արդյունք է, և այն պետք է խնամքով օգտագործել: Հետևյալ խորհուրդները կօգնեն Ձեզ ուժի մեջ պահել արտադրողի երաժիշիքը:

- Սարքը չոր պահեք: Տեղումները, խոնավությունը և հեղուկների բուրբ տեսակները կարող են տարբեր պարունակել, որոնք կարող են հանգեցնել էլեկտրոնային սխեմաների ֆայֆայմանը: Եթե սարքը թրջվել է, մարտկոցը հանեք և նորից տեղադրելուց առաջ սպասեք մինչև սարքը ամբողջովին չորանա:
- Սարքը չի կարելի վռնոտ, կեղտոտ վայրերում պահել կամ օգտագործել: Շարժական մասերն ու էլեկտրոնային բաղադրամասերը կարող են վնասվել:
- Սարքը չի կարելի պահել բարձր ջերմաստիճանի պայմաններում: Բարձր ջերմաստիճանները նվազեցնում են էլեկտրոնային սարքերի շահագործման ժամկետը, վնասում մարտկոցները, ծոմնում կամ հալեցնում պլաստմասսայե որոշ տարրեր:
- Սարքը չի կարելի պահել ցածր ջերմաստիճանի միջավայրում: Երբ այն վերադառնում է բնական ջերմաստիճանի, սարքի ներսում

Խնամք և սպասարկում

կարող է խոնավություն հավաքվել և վնասել էլեկտրոնային տպատախտակները:

- Մի փորձեք բացել սարքը այլ կերպ, քան նկարագրված է սույն ուղեցույցում:
- Սարքը վայր մի գցեք, մի ցնցեք, հարվածի մի ենթարկեք: Կոպիտ վերաբերմունքը կարող է կոտրել ներքին տպատախտակները և մեխանիկական նուրբ բաղադրամասերը:
- Սարքը մաքրելիս մի օգտագործեք ուժեղ ֆիմիական նյութեր, մաքրող լուծիչներ կամ ուժեղ ներգործության մաքրող նյութեր:
- Սարքը չի կարելի ներկել: Ներկը կարող է խցանվել շարժական մասերի միջև՝ խափանելով սարքի պատշաճ աշխատանքը:
- Սարքի վրա գտնվող ռադիոակտիվները (տեսախցիկի, հեռավորության չափիչի, լուսընդունիչի և այլն) մաքրելու համար փափուկ, մաքուր, չոր շոր օգտագործեք:
- Միայն սարքի հետ մատակարարված կամ հաստատագրված ալեհավաք օգտագործեք: Չհաստատագրված, փոփոխված կամ կցորդված ալեհավաքները կարող են վնասել սարքը և խախտել ռադիոսարքերի օգտագործումը կանոնակարգող օրենքները:
- Լիցենզավորիչը միայն սենյակում կամ բնակարանում օգտագործեք:
- Մի՞շտ պատրաստե՛ք այն տեղեկությունների պահեստային օրինակները, որոնք ցանկանում եք պահպանել, օրինակ՝ կոնտակտային տվյալներ և օրացուցային նշումներ:

- Ժամանակ առ ժամանակ սարքի աշխատանքը բարելավելու նպատակով սարքը ելման վիճակի բերե՛ք՝ այն անջատելով և մարտկոցը հանելով:

Այս խորհուրդները հավասարապես վերաբերում են Ձեր սարքին, մարտկոցին, լիցքավորիչին և բոլոր լրացուցիչ սարքերին: Եթե սարքերից որևէ մեկը պատճան չի գործում, նորոգման համար այն տարե՛ք լիազոր սպասարկման մոտակա կետ:

Թափոնների հեռացում



Արտադրանքի, տպագիր նյութերի կամ փաթեթավորման վրա խաչանշված անվավոր աղբարկղի պատկերը հիշեցնում է, որ բոլոր էլեկտրական և էլեկտրոնային արտադրանքները, մարտկոցները և կուտակիչները, իրենց շահագործման ժամկետի ավարտից հետո, պետք է հանձնվեն հատուկ ընդունման կետերին: Այս պահանջը վերաբերում է Եվրոպական Միությանը և այլ վայրերի, որտեղ գոյություն ունեն հատուկ ընդունման կետեր: Դեռ մի նետե՛ք այս նշանով պիտակավորված արտադրանքը՝ որպես չտեսակավորված կենցաղային աղբ:

Արտադրանքները ընդունման կետ վերադարձնելով՝ դուք կանխում եք թափոնների չվերահսկվող հեռացումը և նպատում եք նյութական պաշարների վերաօգտագործմանը: Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ արտադրանքի մանրածախ վաճառակետից, թափոնների հեռացման համար պատասխանատու տեղական իշխանության մարմիններից, ազգային արտադրողների գործունեության համար պատասխանատու կազմակերպություններից կամ Nokia-ի տեղական ներկայացուցչությունից: Արտադրանքի էկո-

Անվտանգության համար լրացուցիչ տեղեկություններ

հայտարարագրի կամ ձեր հնացած ապրանքը վերադարձնելու վերաբերյալ հրահանգներին ծանոթանալու համար տե՛ս Ձեր էրկրին վերաբերող տեղեկատվությունը www.nokia.com ինտերնետային կայքում:

Անվտանգության համար լրացուցիչ տեղեկություններ

Փոփ երեխաներ

Ձեր սարքը և լրացուցիչ սարքերը կարող են մանր մասեր պարունակել: Դրանք փոփ երեխաներից հեռու պահե՛ք:

Աժխատանֆային միջավայր

Սույն սարքը, ախանջին սեղմած նորմալ դիրքում կամ մարմնից առնվազն 2.2 սանտիմետր (7/8 դյույմ) հեռավորության վրա օգտագործելիս, համապատասխանում է ադիոհաճախությունների (RF) հառագայքման պահանջներին: Հեռախոսն աժխատանֆի ժամանակ մարմնին ամրացնելու նպատակով տեղափոխման պայուսակի կամ գոտու ամրակալ օգտագործելու դեպքում պետք է զգուշանալ, որպեսզի դրանք մետաղ չպարունակեն և սարքը մարմնից պահեն վերոհիշյալ հեռավորության վրա :

Տվյալներ պարունակող ֆայլեր կամ հաղորդագրություններ հաղորդելու համար սարքը պահանջում է բարձրորակ միացություն ցանցի հետ: Որոշ դեպքերում տվյալներ պարունակող ֆայլերի կամ հաղորդագրությունների հաղորդումը կարող է հետաձգվել մինչև նման

Անվտանգության համար լրացուցիչ տեղեկություններ

միացությունը առկա լինի: Համոզվե՛ք, որ վերը նշված հեռավորությունը վերաբերող պահանջները բավարարված են մինչև տվյալների հաղորդման ավարտը:

Սարքի որոշ մասեր մագնիսական հատկություններ ունեն: Մետաղական մասերը կարող են ձգվել դեպի սարքը: Վարկային քարտեր կամ հիշողության մագնիսական կրիչներ չի կարելի սարքի մոտակայքում տեղադրել, քանի որ դրանց վրա գրանցված տեղեկությունները կարող են ջնջվել:

Բժեկական սարքավորումներ

Ռադիոհաղորդիչ ցանկացած սարքավորման աշխատանք՝ ներառյալ անլար հեռախոսները, կարող են խանգարել բավարար պաշտպանություն չունեցող բժեկական սարքավորումների աշխատանքին: Խորհրդակցե՛ք բժեկի կամ բժեկական սարքավորման արտադրողի հետ՝ պարզելու համար, թե արդյո՞ք այդ բժեկական սարքերը բավարար պաշտպանություն ունեն ռադիոհաճախության արտախոս էներգիայից, կամ եթե այլ հարցեր ունե՛ք: Բժեկական հաստատություններում գտնվելիս հեռախոսն անջատե՛ք, եթե դա պահանջվում է այստեղ փակցված կանոններով: Հնարավոր է, որ հիվանդանոցներն ու առողջապահական հաստատությունները սարքավորումներ օգտագործեն, որոնք զգայուն են արտախոս ռադիոհաճախության էներգիայի նկատմամբ:

Փոխադաստված բժեկական սարքավորումներ

Բժեկական սարքավորումներ արտադրողները խորհուրդ են տալիս, որ անլար սարքի և փոխադաստված բժեկական սարքավորումների

Անվտանգության համար լրացուցիչ տեղեկություններ

(ինչպիսիք են սրտի ռիթմավարը կամ սրտամկանի թելիկախաղը վերացնող էլեկտրական սարքը) միջև պահպանվի առնվազն 15.3 սանտիմետր (6 դյույմ) տարածություն՝ բժշկական սարքի աշխատանքի հնարավոր խաթարումից խուսափելու համար: Այդպիսի սարքավորումներ կրող անձինք պետք է.

- Անլար սարքը միացված վիճակում միշտ ավելի քան 15.3 սանտիմետր (6 դյույմ) հեռու պահեն բժշկական սարքից:
- Անլար սարքը ճոցագրպանում չպահեն:
- Անլար սարքը պահեն բժշկական սարքավորման նկատմամբ հակառակ տեղանքի մոտ՝ հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար:
- Իսկույն անջատեն անլար սարքը, եթե այդպիսի ազդեցության առկայությունը ենթադրելու հիմքեր կան:
- Կարդան և հետևողականորեն կատարեն փոխպատվաստված բժշկական սարքավորման արտադրողի ցուցումները:

Ձեր անլար սարքը բժշկական սարքավորման հետ օգտագործելու վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում խորհրդակցեք ձեզ բժշկական ծառայությունների մատուցող անձի հետ:

Լսողական օժանդակ սարքեր

Թվային անլար որոշ սարքեր կարող են խանգարել որոշ լսողական օժանդակ սարքերի աշխատանքին: Նման խանգարումներ լինելու դեպքում խորհրդակցեք ծառայություն մատուցողի հետ:

Ավտոմեքենաներ

Ռադիոհաճախության ազդանշանները կարող են ազդել ավտոմեքենաներում սխալ տեղակայված կամ ոչ պատշաճ կերպով պատշաճանված էլեկտրոնային համակարգերի վրա (վառելիքի էլեկտրոնային ներարկման համակարգեր, էլեկտրոնային արգելակման համակարգեր, արագության կառավարման էլեկտրոնային համակարգեր, անվտանգության բարձիկների համակարգեր և այլն): Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ավտոմեքենան կամ օժանդակ սարքավորումներն արտադրողին կամ նրա ներկայացուցչին:

Միայն որակավորված մասնագետը պետք է սպասարկի սարքավորումները և դրանք տեղադրի ավտոմեքենայի մեջ: Սխալ տեղադրումը կամ սպասարկումը կարող է վտանգավոր լինել և դադարեցնել սարքի երաշխիքը: Պարբերաբար ստուգեք, որ ձեր ավտոմեքենայում տեղադրված անլար բոլոր սարքավորումները պատշաճորեն ամրացված և սարքին լինեն: Սարքի, դրա մասերի և լրացուցիչ սարքերի հետ նույն խցիկում չի կարելի այրվող հեղուկներ, գազեր կամ պայթուցիկ նյութեր պահել: Անվտանգության բարձիկներ ունեցող ավտոմեքենաներում հարկավոր է հիշել, որ անվտանգության բարձիկները մեծ ուժով են փչվում: Անվտանգության բարձիկի վրա կամ նրա բացման տարածքում չի կարելի որևէ իր տեղադրել՝ ներառյալ ամրացված կամ շարժական անլար սարքավորումները: Եթե ավտոմեքենայի միջի անլար սարքավորումները սխալ տեղադրված լինեն և անվտանգության բարձիկը փչվի, դա կարող է լուրջ վնասվածքների պատճառ դառնալ:

Անվտանգության համար լրացուցիչ տեղեկություններ

Օդանավի թռիչքի ժամանակ սարքից օգտվելն արգելվում է: Անջատե՛ք Ձեր սարքը օդանավ բարձրանալուց առաջ: Օդանավում անլար հեռահաղորդակցության սարքերի օգտագործումը կարող է վտանգ ներկայացնել օդանավի աշխատանքի համար, խանգարել անլար հեռախոսային ցանցի աշխատանքին և խախտել օրենքը:

Հնարավոր պայթյունավտանգ միջավայրեր

Հնարավոր պայթյունավտանգ միջավայրերում գտնվելիս սարքն անջատե՛ք և հետևե՛ք բոլոր ցուցանակներին ու հրահանգներին: Հնարավոր պայթյունավտանգ միջավայրերին են պատկանում բոլոր այն վայրերը, որտեղ սովորաբար խորհուրդ է տրվում ավտոմեքենայի շարժիչն անջատել: Նման վայրերում կայծը կարող է պայթյունի կամ հրդեհի հանգեցնել, ինչը կարող է պատճառել մարմնական վնասվածքներ և նույնիսկ մահ: Սարքն անջատե՛ք վառելիքի լցակայաններում: Վառելանյութի պահեստավորման և բաշխման վայրերում, էլեկտրական գործարաններում կամ այն վայրերում, որտեղ պայթեցման աշխատանքներ են կատարվում, հետևե՛ք ռադիոսարքավորումների օգտագործման սահմանափակումներին: Հնարավոր պայթյունավտանգ մթնոլորտ ունեցող վայրերը սովորաբար, բայց ոչ միշտ, հստակ նշված են լինում: Դրանք ներառում են նավերում տախտակամածի տակ գտնվող տարածքները, էլեկտրական նյութերի տեղափոխման կամ պահեստավորման վայրերը և այն տարածքները, որտեղ օդը էլեկտրական նյութեր կամ մասնիկներ է պարունակում, ինչպիսիք են ավազահատիկը, փոշին կամ մետաղափոշին: Դուք պետք է ստուգե՛ք հեղուկ գազով (օրինակ՝ պրոպան կամ բութան) աշխատող

ավտանճեհեռախոսների արտադրողների հետ, թե արդյո՞ք այս սարքը կարելի է անվտանգ օգտագործել դրանց մոտակայքում:

Արտակարգ իրավիճակների հեռախոսագանգեր



Կարևոր է. Սույն սարքը գործում է ռադիոազդեցանքների, անլար և ֆիզսլաժ հեռախոսացանցերի, ինչպես նաև օգտագործողի կողմից ծրագրավարվող գործառնությունների միջոցով: Եթե Ձեր սարքն ինտերնետով ձայնային կանչի հնարավորություն է տալիս (ինտերնետային զանգեր), ակտիվացրե՛ք և՛ ինտերնետային զանգերը, և՛ բջջային հեռախոսը: Եթե երկուսն էլ ակտիվացված են, սարքը կփորձի արտակարգ իրավիճակների կանչ կատարել և՛ բջջային ցանցի, և՛ Ձեզ ինտերնետային զանգերի ծառայություններ տրամադրողի միջոցով: Բոլոր դեպքերում չէ՛, որ միացումները կարող են երաշխավորված լինել: Կարևոր դեպքերում, օրինակ՝ բժշկական շտապօգնություն կանչելու անհրաժեշտության դեպքում, չի կարելի հույսն ամբողջովին անլար սարքի օգտագործման վրա դնել:

Արտակարգ իրավիճակներում զանգահարելու համար հարկավոր է անել հետևյալը.

1. Եթե սարքը միացված չէ, միացրե՛ք այն: Համոզվե՛ք, որ ազդեցանքի հզորությունը բավարար է: Ձեր սարքից կախված՝ գուցե կարիք լինի կատարել հետևյալը.
 - Մացրե՛ք SIM փաթեթը, եթե սարքն այդպիսի փաթեթ օգտագործում է:

Անվտանգության համար լրացուցիչ տեղեկություններ

- Վերացրե՛ք կանչերի վրա դրված որոշ սահմանափակումներ, որոնք ակտիվացրել է՛ք Ձեր սարքում:
 - Փոխե՛ք սարքի աշխատանքային ռեժիմը՝ օֆլայն կամ թուխչային ռեժիմից անցնելով ակտիվ ռեժիմին:
2. Սեղմե՛ք «Վերջ» ստեղծը այնքան անգամ, որքան անհրաժեշտ է էկրանը մաքրելու և սարքը հեռախոսագանգ կատարելու համար պատրաստ վիճակի բերելու համար:
 3. Մուտքագրե՛ք Ձեր գտնվելու վայրի՝ արտակարգ իրավիճակների կառավարման կենտրոնի պաշտոնական հեռախոսահամարը: Արտակարգ իրավիճակների կառավարման կենտրոնների համարները կարող են, գտնվելու վայրից կախված, տարբեր լինել:
 4. Սեղմե՛ք զանգահարելու ստեղծը:

Արտակարգ իրավիճակների հեռախոսագանգի ժամանակ անհրաժեշտ բոլոր տեղեկությունները հնարավորինս հեզորդե՛ք: Հնարավոր է, որ դեպի վայրում ձեր անլար սարքը կապի միակ միջոցը լինի: Հեռախոսագանգը մի ընդհատե՛ք մինչև թույլտվություն չստանա՛ք:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ (SAR)

Սույն շարժական սարքը համապատասխանում է ռադիոհառադալթմանը վերաբերող ուղեցույցներին

Ձեր շարժական սարքը ռադիոհաղորդիչ և ընդունիչ սարք է: Այն նախագծված է այնպես, որպեսզի չգերազանցի ռադիոհառադալթմանի ազդեցության միջազգային ուղեցույցներով սահմանված

Անվտանգության համար լրացուցիչ տեղեկություններ

սահմանափակումները: Այդ ուղեցույցները մեակվել են ICNIRP անկախ գիտական կազմակերպության կողմից և ներառում են այն բույլատրելի սահմանները, որոնք մեակված են բոլոր մարդկանց պաշտպանվածությունը ապահովելու համար՝ անկախ նրանց տարիքից կամ առողջական վիճակից:

Ռադիոհառագայթման անընչվող ուղեցույցները շարժական սարքերի համար օգտագործում են Կլանման Տեսակարար Կշիռ (ԿՏԿ կամ SAR) կոչվող չափման միավորը: ICNIRP ուղեցույցում նշված SAR-ի սահմանային արժեքը միջինացված հյուսվածքային 10 գրամի վրա կազմում է 2.0 վատտ/կիլոգրամ (Վտ/կգ): SAR-ի չափման փորձերը կատարվել են օգտագործման ստանդարտ դիրքում, երբ սարքը հաղորդում է հաստատված ամենաբարձր հզորության մակարդակով՝ ստուգվող բոլոր հաճախությունների տիրույթներում: Գործող սարքի իրական SAR-ի մակարդակը կարող է առավելագույն արժեքից ցածր լինել, բանի որ այն նախագծված է այնպես, որ օգտագործի ցանցին միանալու համար անհրաժեշտ հզորությունը միայն: Այս արժեքը փոփոխվում է մի քանի գործոններից կախված, մասնավորապես այն բանից, թե ցանցի հաղորդակայանից ինչ հեռավորության վրա եք գտնվում: Համաձայն ICNIRP ուղեցույցի, սարքը ակնհայտ մոտ օգտագործելու դեպքում SAR-ի առավելագույն արժեքը չպետք է գերազանցի 0.48 Վտ/կգ :

Լրացուցիչ սարքերի և պիտույքների օգտագործումը կարող է SAR-ի տարբեր արժեքների հանգեցնել: SAR-ի արժեքները կարող են տարբեր լինել՝ կախված հաշվարկությունների և չափումների ազգային պահանջներից և ցանցի հաճախակառուցման տիրույթից: SAR-ի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարող են տրամադրվել

Անվտանգության համար լրացուցիչ տեղեկություններ

www.nokia.com ինտերնետային կայքում՝ համապատասխան արտադրանքի տեղեկատվական էջում:

Ցուցիչ

Պայմանագրեր կամ

թվեր

IM 33

Nokia Care 16

PIN 15

SIM ֆարս 17, 23

Ա

ականջակալ 19

ակնթարթային

հաղորդագրությունների

փոխանակում 33

անվտանգության կոդ 15

արագ համարահավաք 24

Դ

դյուրանցումներ 39

Չ

զննարկիչ 52

Ի

էլֆոստ 30

Թ

թվային ռեժիմ 25

Ի

ինտերնետ 52

Լ

լրացուցիչ սարքեր 43

Խ

խաղեր 50

Մ

ծրագրեր 50

Կ

կազմակերպիչ 51

կազմաձևում 43

կանչեր 24

կանչերի գրանցամատյան 36

Ցուցիչ

Հ

- հաղորդագրություններ
պարամետրեր 34
- հաղորդագրությունների
կենտրոնի համարը 28
- հաղորդագրությունների
փոխանակում
ձայնային
հաղորդագրություններ 32
- համացանց 52
- հնչերանգներ 38

Ձ

- ձայնագրանցիչ 48
- ձայնային
հաղորդագրություններ 32

Մ

- մասեր 20
- մարտկոց
լիցավորվում է 18
- մուտֆի կոդ 15

Ն

- նշանաբառ 15

Շ

- շտապ
հաղորդագրություններ 32

Պ

- պարամետրեր 37
 - գործարանային 44
 - ժամ 38
 - կազմածեւում 43
 - հաղորդագրություններ 34
 - հեռախոս 42
 - հնչերանգներ 38
 - ցուցասարք 38
 - օր 38
- պրոֆիլներ 37

Ս

- ստեղնախմբի կոդպեք 22
- ստեղնակոդպեք 22
- ստեղներ 20

Տ

- տեքստ մուտքագրելը 25
- տեքստային ռեժիմներ 25

տեխստերի ավանդական

ներմուծում 26

տեխստերի կանխատեսող

ներմուծում 26

Ց

ցուցասարք 38

Օ

օպերատորի ընտրացանկ 45

օֆլայն ռեժիմ 23